ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի
«26» հուլիսի 2021թ.
թիվ 02-Ո-21-010/03 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝
Է. Սուքիասյան _____

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

ԵՐԱՇԽԻՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախագիծը	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
ԿԱԶՄԵՑ	Լ. Մամիկոնյան	Գործադիր տնօրենի տեղակալ	03.06.2021	
ՍՏՈՒԳԵՑԻՆ	Ա. Մարգարյան	Որակի պատասխանատու	09.06.2021	
	Ա. Մեջլումյան	Իրավաբանական բաժնի պետ	11.06.2021	
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ	Ա. Մելքոնյան	Գործադիր տնօրեն	16.06.2021	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ----------2
2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ----------3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ----------4
4. ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ----------5
5. ՎԿԱՅԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ----------7
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ----------7
7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ----------8
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ----------9
9. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ----------10
10. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ----------10
11. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------11
12. ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՎԿԱՅԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ----------12
13. ՎԿԱՅԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ----------13
14. ՎԿԱՅԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՎԿԱՅԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ--14
15. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ----------16
16. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ----------16
17. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ----------18
18. ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ--19
19. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ----------20
20. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ----------22
21. ՍՈՒԲԲՈԳԱՑԻԱ ----------22
22. ԾԱՆՈՒՑՈՒՄ----------23
23. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)----------23
24. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ----------23

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ երաշխիքի կամավոր ապահովագրության պայմանները» (այսուհետ նաև՝ Պայմաններ) փաստաթուղթը նպատակ է հետապնդում տալ Պայմանների կիրառման յուրաքանչյուր ոլորտի ապահովագրական օբյեկտ, ապահովագրական պատահար, ապահովագրական հատուցում և այլ հասկացությունների սահմանումը, ինչպես նաև յուրաքանչյուր ռիսկի պարագայում կարգավորել Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերի, չհատուցվող ծախսերի, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի և ապահովագրական պատահարի դեպքում կողմերի գործողությունները:

1.2 Պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.3 Ընկերությունն իրականացնում է երաշխիքի ապահովագրությունը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված Երաշխիքի տրամադրում ապահովագրության դասով:

1.4 Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին ծանոթացնել Պայմաններին, տալ Պայմանների մեկ օրինակ և այդ մասին նշում կատարել ապահովագրության վկայագրում (այսուհետ նաև՝ Վկայագիր): Վկայագրի և Պայմանների միջև հակասությունների կամ անհամապատասխանության դեպքում գործում են Վկայագրով սահմանված դրույթները:

1.5 Վկայագրեր կնքելիս Ապահովադիրն իրավունք ունի նշելու ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (շահառուներ) կամ պետական մարմինների, որոնք օրենքի, այլ իրավական ակտի կամ Վկայագրի հիման վրա ունեն գույքային շահ՝ Վկայագրով ապահովագրական հատուցում ստանալու համար, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ Շահառուին փոխարինել այլ անձով՝ մինչև ապահովագրական դեպքի տեղի ունենալը, որի վերաբերյալ կողմերի միջև կնքվում է հավելված:

1.6 Հօգուտ Շահառուի Վկայագրի կնքումը Ապահովադրին չի ազատում Վկայագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելուց, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, կամ Ապահովադրի պարտավորությունները չեն կատարվում Շահառուի կողմից:

1.7 Պայմաններով ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքները, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

1.8 Պայմանները կցվում են Վկայագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը, և պարտադիր են Ապահովագրողի, Ապահովադրի ու Շահառուի համար:

1.9 Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ Պայմանների առանձին դրույթներ կարող են փոփոխվել և/կամ որպես բացառություն չկիրառվել՝ համաձայն Վկայագրի:

1.10 Պայմաններում փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու հաստատվում են Ընկերության խորհրդի որոշմամբ:

1.11 Պայմանները հրապարակային օգտագործման փաստաթուղթ է և կարող է տեղադրվել Ընկերության պաշտոնական վեբ կայքում (www.silinsurance.am):

2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Սույն Պայմաններում հետևյալ տերմինները և հասկացությունները օգտագործվում են հետևյալ նշանակությամբ.

2.1.1. Ապահովագրող՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն:

2.1.2. Ապահովադիր (Հիմնական պարտապան, Պրինցիպալ կամ մրցույթի մասնակից)՝ Ապահովագրողի հետ ապահովագրության Վկայագիր կնքած՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, օտարերկրյա կազմակերպություն, գործունակ ֆիզիկական անձ, օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ:

2.1.3. Շահառու (Պարտատեր, բենեֆիցիար կամ պատվիրատու)՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Վկայագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, ում հետ Ապահովադիրը կնքել է գրավոր Պայմանագիր,

2.1.4. Պայմանագիր՝ գնում կատարելու նպատակով Ապահովադրի և Շահառուի միջև ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գրավոր համաձայնություն (հետագայում՝ Պայմանագիր)

2.1.5. Մրցույթ՝ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման առաջարկների ընտրության մրցութային ձև՝ համաձայն մրցութային փաստաթղթերում նախապես հայտարարված պայմանների և համաձայնեցված ժամկետի:

2.1.6. Գնում՝ պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված Պրինցիպալի հետ Պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը:

2.1.7. Ապահովագրական պատահար՝ Վկայագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որը կրում է հանկարծակի ու պատահական բնույթ, ի հայտ է եկել Ապահովադրի պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով, տեղի է ունեցել Վկայագրի գործողության ընթացքում, և որի տեղի ունենալու ուժով (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված դեպքերի) Ապահովագրողը պարտավորվում է Շահառուին վճարել ապահովագրական հատուցում Պայմաններում և Վկայագրում սահմանված կարգով:

2.1.8. Ապահովագրական գումար՝ Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափը, որը սահմանվում է յուրաքանչյուր երաշխիքի տեսակի համար առանձին և սահմանվում է Վկայագրով:

2.1.9. Ապահովագրության վկայագիր կամ Վկայագիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ՝

սույն Պայմաններում նախատեսված բացառությունների) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Շահառուին, իսկ Ապահովադիրը պարտավոր է վճարել Վկայագրում սահմանված ապահովագրավճարը Պայմաններով նշված չափով, կարգով և ժամկետներում:

2.1.10. Ապահովագրական ռիսկ՝ առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծություն:

2.1.11. Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում)՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Վկայագրի հիման վրա Շահառուին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ:

2.1.12. Ապահովագրավճար՝ Վկայագրով սահմանված չափով և պայմաններով վարձատրության նախատեսված գումար, որը վճարվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրամադրվող երաշխիքի համար:

2.1.13. Չհատուցվող գումար՝ Ապահովադրի մասնակցության չափն է վնասի հատուցմանը, որը չի հատուցվում Ապահովագրողի կողմից և որը սահմանվում է Վկայագրով՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով:

2.1.14. Որակավորման չափանիշները՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար մրցույթի հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն Պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

2.1.15. Երաշխիք՝ Ապահովագրողի գրավոր պարտավորությունն է Ապահովադրի պարտատիրոջ (Շահառուի) հանդեպ վերջինիս վճարել դրամական գումար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և Վկայագրով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, Շահառուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս, Ապահովադրի հիմնական Պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության, Վկայագրի և Պայմանների:

2.1.16. Պարտավորություն՝ Ապահովադրի հիմնական պարտավորությունը, որի ապահովման համար տրված է երաշխիքը, և որը կարող է ծագել Պայմանագրի համաձայն կամ ՀՀ օրենսդրության ուժով:

2.1.17. Գործարք՝ Ապահովադրի կողմից Շահառուին ծառայությունների մատուցում կամ ապրանքների մատակարարում կամ աշխատանքների կատարում, որի շրջանակներում Ապահովագրողի կողմից տրամադրվում է երաշխիք:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտներ են հանդիսանում Ապահովադրի գույքային շահերը՝ կապված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում վնասների ռիսկի առաջացման հետ, մասնավորապես Ապահովադրի և Շահառուի միջև կնքված Պայմանագրով և/կամ մրցույթով նախատեսված Ապահովադրի պարտավորությունների չկատարումը և/կամ ոչ պատշաճ կատարումը:

3.2. Պայմաններով Ապահովագրողը (հանդես գալով որպես Երաշխավոր) Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի դիմաց և ապահովագրական գումարի շրջանակներում երաշխավորում է հատուցել այն վնասները, որոնք ապահովագրության

Վկայագրի ժամկետի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով կրել է Շահառուն, և վերջինս հատուցումը վճարելու պահանջը ներկայացրել է Վկայագրի գործողության ընթացքում:

4. ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վկայագրով կարող են ապահովագրվել հետևյալ երաշխիքներից մեկ կամ մի քանի տեսակները՝

4.1. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

Սույն երաշխիքը տրամադրվում է մրցույթի մասնակից հայտատուին Շահառուի հանդեպ իր պարտավորությունների կատարումը մրցույթով առաջարկվող պայմանների համաձայն ապահովելու համար: Երաշխիքը ապահովում է երաշխիքի գումարի վճարումը Շահառուին, եթե Պրինցիպալը խախտել է մրցույթի հետևյալ պայմանները՝

1. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո մրցույթին մասնակցության հայտը հետ վերցնելը կամ փոփոխելը.
2. Մրցույթը շահելուց հետո գնումների Պայմանագիր կնքելուց կամ ծառայություններ մատուցելուց հրաժարվելը.
3. Մրցույթի փաստաթղթերում նշված ձևով և Պայմանագրի կնքումից հետո Պայմանագրի կատարումը չապահովելը:

4.2. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Սույն երաշխիքը տրամադրվում է մրցույթի հաղթող հայտատուին իր պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումը Շահառուի հանդեպ ապահովելու համար: Երաշխիքը ապահովում է երաշխիքի գումարի վճարումը Շահառուին, եթե Պրինցիպալը խախտել է Պայմանագրի պայմանները, այդ թվում ժամկետները, գները և/կամ որակի պատշաճ կատարումը:

4.3. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Սույն երաշխիքը տրամադրվում է մրցույթի հաղթող հայտատուին իր պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումը Շահառուի հանդեպ ապահովելու նպատակով: Երաշխիքը ապահովում է երաշխիքի գումարի վճարումը Շահառուին, եթե Պրինցիպալը խախտել է և կամ չի ապահովել Պայմանագրի պատշաճ կատարումը որակավորման չափանիշները չապահովելու պատճառով և/կամ հետևանքով:

4.4. ԿԱՆԽԱՎՃԱՐԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

Սույն երաշխիքը տրամադրվում է որպես մրցույթի հաղթող հայտատուի Պայմանագրով Շահառուից ստացած կանխավճարի վերադարձման երաշխավորություն այն դեպքերում, երբ Պրինցիպալը խախտում է մատակարարման կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանները և դրանով Շահառուն իրավունք է ստանում հետ ստանալ իր կողմից վճարված կանխավճարի ամբողջ գումարը կամ դրա մի մասը:

4.5. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Սույն երաշխիքը տրամադրվում է Պրինցիպալի՝ Պայմանագրով ավարտված աշխատանքների կամ մատուցած ապրանքների կամ ծառայություններից հետո հայտնաբերված թերություններից բխող ֆինանսական պատասխանատվությունը ապահովելու նպատակով:

Սպասարկման երաշխիքով երաշխավորվում է բոլոր այն թերությունների վերացումը, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի իրականացման ընթացքում հետևյալ դեպքերում.

- նախագծման թերություններ,
- մասնագիտական թերություններ,
- այլ պատճառահետևանքային խնդիրներ:

4.6. ՊԱՀՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ԵՐԱՇԽԻՔ

Պահվող գումարը միջանկյալ կատարողական ակտով Պրինցիպալին վճարման ենթակա գումարի որոշակի մաս է, որը պահվում է Շահառուի մոտ որպես Պրինցիպալի կողմից Պայմանագրի պահանջների պատշաճ կերպով իրականացման երաշխավորություն: Պահվող գումարի երաշխիքի ապահովագրությունը թողարկվում է Շահառուի հնարավոր ծախսերի հատուցման համար, որոնք կարող են առաջանալ Պրինցիպալի Պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ մատուցվող ապրանքների կամ ծառայությունների թերի կատարման հետ, ընդ որում Պրինցիպալը Շահառուից ստանում է Պայմանագրով իրեն հասանելիք գումարի մի մասը հիմնական աշխատանքները կամ ծառայությունները կամ ապրանքը մատուցելուց և ընդունման–հանձնման ակտը ստորագրելուց հետո: Պահվող գումարի երաշխիքը ավարտվում է Պրինցիպալի կողմից հնարավոր թերությունները վերացնելուց հետո և Շահառուի հետ վերջնական ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց հետո:

4.7. ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

4.7.1. Մաքսային և ակցիզային երաշխիքները թողարկվում են որպես Շահառու հանդիսացող պետական մարմինների համար և երաշխավորում են հարկերի և մաքսատուրքերի վճարումը Պրինցիպալի կողմից:

4.7.2. Վկայագրով կարող են ապահովագրվել նաև երաշխիքի այլ տեսակները և կամ հետևյալ ձևերը՝

4.7.2.1. Անուղղակի երաշխիք: Սույն երաշխիքով մասնակիցը դիմում է Ապահովագրողին երաշխիք տրամադրելու հանձնարարությամբ: Ապահովագրողը գործարքի դրական որոշման առկայության դեպքում Շահառուի բանկին և/կամ ապահովագրական ընկերությանը հանձնարարում է երաշխիք տրամադրել հօգուտ Շահառուի և տրամադրում է իր կոնտր-երաշխիքը Շահառուի բանկի և/կամ ապահովագրական ընկերության օգտին: Շահառուի բանկը կամ ապահովագրական ընկերությունը ներկայացնում է իր երաշխիքը Շահառուի օգտին: Շահառուն կարող է պահանջ ներկայացնել միայն երաշխիք տվող Ապահովագրողին:

4.7.2.2. Ուղղակի երաշխիք: Սույն երաշխիքով մասնակիցը դիմում է Ապահովագրողին երաշխիք տրամադրելու հանձնարարությամբ: Ապահովագրողը գործարքի դրական որոշման առկայության դեպքում Շահառուի օգտին տրամադրում է երաշխիք և վերջինս կարող է պահանջ ներկայացնել միայն երաշխիք տվող Ապահովագրողին:

5. ՎԿԱՅԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Երաշխիքը, որը կարող է ապահովագրվել Վկայագրով, պետք է համապատասխանի հետևյալ նվազագույն պահանջներին՝

5.1. Երաշխիքով ապահովված պարտավորությունը համապատասխանում է այն պարտավորություններին (երաշխիքի տեսակին), որը նշված է Պայմանագրում:

5.2. Ապահովադրի պարտավորությունը, որը ապահովված է երաշխիքով, կապված չէ այն գործունեության տեսակներով, որոնց վրա ապահովագրությունը չի տարածվում:

Ապահովադրի և Շահառուի գտնվելու և/կամ գործունեության վայրը համապատասխանում է Վկայագրով սահմանված ապահովագրության տարածքին:

5.3.Ապահովադիրը և Շահառուն դուստր, կախյալ կամ փոխկապակցված ընկերություններ չեն:

5.4. Պայմաններով և/կամ Վկայագրով նախատեսված այլ պահանջներ:

5.5. Ապահովագրողի որոշմամբ երաշխիքի ապահովագրությունը կարող է իրականացվել նաև գույքի կամ դրամական միջոցների գրավադրմամբ:

5.6. Ապահովագրողի որոշմամբ երաշխիքի՝ առանց գրավի առարկայի ապահովագրության դեպքում կարող է իրականացվել նաև Ապահովադրի սեփականատերերի և/կամ փայատերերի և/կամ բաժնետերերի և իրենց ընտանիքի անդամների երաշխավորմամբ: Այս դեպքում երաշխիքի գումարի հարաբերակցությունը անձնական գույքի հանդեպ որոշվում է կողմերի համաձայնությամբ և սահմանվում է թողարկվող Վկայագրով:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

6.1 Պայմանների համաձայն ապահովագրական ռիսկ է հանդիսանում ենթադրվող իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Վկայագիրը:

6.2 Ապահովագրական պատահար է հանդիսանում տեղի ունեցած իրադարձությունը, որը նախատեսված է Վկայագրով և որի տեղի ունենալու արդյունքում առաջանում է Ապահովագրողի՝ Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում տրամադրելու պարտականությունը:

6.3.Պայմանների համաձայն Ապահովագրողը (հանդես գալով որպես Երաշխավոր) Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի (վարձատրության) դիմաց և ապահովագրական գումարի շրջանակներում երաշխավորում է հատուցել այն վնասները, որոնք ապահովագրության Վկայագրի ժամկետի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով կրել է Շահառուն, և որոնք Ապահովադիրը չի հատուցել Շահառուի կողմից հատուցումը վճարելու պահանջը ներկայացնելու ամսաթվի դրությամբ՝ համաձայն Վկայագրի դրույթների և պայմանների:

6.4 Սույն Պայմանների համաձայն հիմնարար սկզբունքն այն է, որ Շահառուի հայցը կարող է բավարարվել միայն այն դեպքում, երբ դա պայմանավորված է Վկայագրով և/կամ մրցույթով նախատեսված պարտավորությունների չկատարմամբ և/կամ ոչ պատշաճ կատարմամբ, և Ապահովագրողին պետք է ներկայացվեն այդ պարտավորությունների խախտման ապացույցները:

6.5. Կախված երաշխիքի տեսակից՝ որպես ապահովագրական պատահարի հիմք, կարող են հանդիսանալ Պրինցիպալի հետևյալ գործողությունները և/կամ անգործությունը և/կամ հետևյալ իրադարձությունները՝
6.5.1.Պրինցիպալը հայտարարվել է որպես ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է Պայմանագիր կնքելու իրավունքից.
6.5.2. Պրինցիպալը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
6.5.3.Հայտերի բացումից հետո Պրինցիպալը հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:
6.5.4.Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո մրցույթին մասնակցության հայտը հետ վերցնելը կամ փոփոխելը.
6.5.5. Մրցույթը շահելուց հետո գնումների Պայմանագիր կնքելուց կամ ծառայություններ մատուցելուց հրաժարվելը.
6.5.6. Մրցույթի փաստաթղթերում նշված ձևով և Պայմանագրի կնքումից հետո Պայմանագրի կատարումը չապահովելը.
6.5.7.Մրցույթը շահելուց և Պայմանագիր կնքելուց հետո չի ապահովել մրցույթով նախատեսված ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման որակը:
6.5.8 Ապահովադրի կողմից՝ Եվրասիական տնտեսական Միության մաքսային օրենսգրքի մասին Պայմանագրի 264-րդ հոդվածով «Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը» և 271-րդ հոդվածով «Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը» սահմանված պարտավորությունների չկատարումը, ոչ պատշաճ կատարումը կամ դրանց կատարումից խուսափելը, որոնք կարող են ծագել Ապահովադրի մոտ՝ Վկայագրում նշված փոխադրման ամփոփագրով նշված ավտոտրանսպորտային միջոցի ժամանակավոր ներմուծում (ընդունում) մաքսային ռեժիմով մաքսային ընթացակարգով ձևակերպման հետևանքով:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

7.1. Ապահովագրական գումարը Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ:
7.2.Ապահովագրական գումարը հավասար է երաշխիքի գումարին, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
7.3.Ապահովագրական գումարը նվազեցվում է Ապահովագրողի կողմից վճարված հատուցումների չափով՝ համաձայն Վկայագրի դրույթների:
Եթե մեկ Վկայագրով ապահովագրվում են տարբեր տեսակի երաշխիքներ, ապա յուրաքանչյուրի ապահովագրական գումարը Վկայագրում նշվում է առանձին-առանձին:
7.4. Եթե Շահառուին վճարվել է ապահովագրական հատուցում, ապա համապատասխան ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման չափով:

Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում ընդունելու օրվանից սկսված:
7.5. Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը, հակառակ դեպքում հերթական ապահովագրական դեպքի ժամանակ կկիրառվի «Ոչ լրիվ արժեքով ապահովագրության դրույթը», ինչ նշանակում է, որ եթե պարզվի, որ ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ապահովագրական գումարը փոքր է Պայմանագրով սահմանված երաշխիքի գումարից, ապա Ապահովագրողն հատուցում է Շահառուին վերջինիս կրած վնասի մի մասը՝ ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրվա դրությամբ ապահովագրական գումարի և երաշխիքի գումարի հարաբերակցությանը համամասնորեն, եթե Կողմերը այլ բան չեն նախատեսել:
7.6. Վկայագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում վճարված հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Վկայագրում նշված ապահովագրական գումարի չափը:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ (ԵՐԱՇԽԻՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ)

8.1. Ապահովագրավճարը տրամադրվող երաշխիքի համար Ապահովագրողին վարձատրության նախատեսված գումարն է, որն Ապահովադիրը Վկայագրի համաձայն պարտավոր է վճարել Ապահովագրողին:
8.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրական սակագնից (ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ), որը սահմանվում է՝ ելնելով գույքի տեսակից, բնութագրերից և այլ գործոններից, որոնք կարող են ազդել ապահովագրական պատահարի առաջացման և վնասի չափի մեծության վրա:
8.3. Ապահովագրավճարը ենթակա է վճարման Վկայագրով սահմանված կարգով և ժամկետներում:
8.4. Եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարման օր է համարվում՝
ա) կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի կամ նրա լիազորված անձի կողմից գումարի ստացման օրը,
բ) անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին գումարի մուտքագրման օրը:
8.5. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու ամբողջ ապահովագրավճարի չափը:
8.6. Եթե Վկայագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Վկայագիրը, եթե Վկայագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի տարաժամկետ վճարման հնարավորություն:
8.7. Եթե Ապահովադիրը Վկայագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից հինգ օր (լրացուցիչ

ժամկետ) հետո միակողմանի լուծելու Վկայագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:
8.8. Եթե ապահովագրավճարի տարաժամկետ վճարման դեպքում Վկայագրով սահմանված ժամկետում հերթական ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Վկայագրով նախատեսվածից փոքր չափով, ապա նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Վկայագրով որպես վճարման վերջին օր նախատեսված ամսաթվին հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 24 ժամ 00 րոպեն:
8.9. Եթե մինչև ապահովագրական պատահարի վրա հասնելը Ապահովադրի կողմից թույլ է տրվել ապահովագրավճարի վճարման կետանց, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

9. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

9.1. Ապահովադիրը պարտավոր է գրավոր կերպով տեղեկացնել Ապահովագրողին այլ ապահովագրողների հետ ապահովագրված երաշխիքի նկատմամբ կնքված ապահովագրության բոլոր վկայագրերի մասին: Միևնույն ժամանակ Ապահովադիրը պարտավոր է նշել այլ ապահովագրական ընկերությունների անվանումները, ապահովագրական ռիսկերը, ապահովագրական գումարների չափերը և գործող ապահովագրության ժամկետները:
9.2. Եթե Պայմանների համաձայն ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի այլ ապահովագրության վկայագիր, որով հատուցվում է նույն կորուստը և/կամ վնասը, ապա Ապահովագրողը պարտավոր չի լինի հատուցում տրամադրել, եթե ապահովագրական օբյեկտի վերաբերյալ առկա է նույն ռիսկերով ավելի վաղ կնքած ապահովագրության վկայագիր:

10. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

10.1. Վկայագրով կարող է սահմանվել չհատուցվող գումար (ապահովադրի մասնակցության չափ վնասի հատուցմանը), որն Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնեցված գումար է կամ սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ:
10.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:
10.3. Վկայագրում Պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Վկայագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
10.4. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

11. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրողը չի հատուցում այն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են/առաջացել են հետևյալ պատճառներով.

11.1. Ֆորս-մաժորային իրավիճակ, որի տեղի ունենալը գրանցվել և օրինականորեն ապացուցվել է,

11.2. Շահառուի մեղավորություն,

11.3. Խարդախություն համաձայնագրերում,

11.4. Ֆինանսական կորուստներ, որոնք տեղի են ունեցել Վկայագիրը ուժի մեջ մտնելուց առաջ,

11.5. Պատերազմ, ներխուժում կամ արտաքին թշնամիների գործողություններ, քաղաքացիական պատերազմ, հեղափոխություն, ապստամբություն, խռովություն, ռազմական բռնապետություն, դավադրություն, բռնագրավում, օտարում, ազգայնացում, բռնագանձում, ոչնչացում կամ վնասում դե ֆակտո կամ դե յուրե որևէ կառավարության կամ հանրային իշխանության հրահանգով, ահաբեկչական գործողություններ:

11.6. Հայցեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել են իոնացնող ճառագայթների կամ ռադիոակտիվ աղտոտման և օդի, ջրի և հողի աղտոտման կամ ցանկացած պայթուցիկ միջուկային սարքի կամ դրա որևէ միջուկային մասի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ վտանգավոր հատկության հետևանքով:

11.7. Հայցը առաջացել է Պրինցիպալի համար մշակված չափանիշների կամ տվյալ գործառնությունների պատասխանատուի սխալ ընտրության կամ պատվիրատուի առաջարկի սխալ գնահատման հետևանքով:

11.8. Հայցը առաջացել է (Ապահովադրի ուժերից վեր) պատվիրատուի կողմից հաստատված տեխնիկական առաջարկների և ապահովագրական պատահարի համար պատասխանատու կողմերի միջև անհամապատասխանությունների հետևանքով:

11.9. Կողմերի կողմից պարտավորությունների խախտում՝ բնական աղետների հետևանքով, ինչպիսիք են հրաբուխի ժայթքումը, երկրաշարժը, սողանքը և այլն:

11.10. Ապահովադրի և Շահառուի միջև դատական վեճերի լուծման համար առաջացած որոշակի իրավական ծախսեր:

11.11. Ենթակա չեն ապահովագրության այն անձիք ՝

11.11.1 որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

11.11.2. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

11.11.3.որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

11.11.4. որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.
11.11.5. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.
11.11.6. որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են ՀՀ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝
ա. խախտել է Պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Շահառուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,
բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,
գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

12. ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՎԿԱՅԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

12.1. Վկայագրի կնքման հիմք է ծառայում Ապահովադրի կողմից լրացված, Ապահովագրողի կողմից տրամադրած դիմում-հարցաթերթիկը կամ բանավոր հայտը:
12.2. Վկայագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից: Անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից:
12.3. Վկայագրին կից կարող են թողարկվել համաձայնագրեր կամ հավելվածներ, որոնք հանդիսանում եմ դրա անբաժանելի մասը:
12.4. Վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի դիմումով վերջինիս կտրամադրի Վկայագրի կրկնօրինակը:
12.5. Վկայագրի գործողության ժամկետը սահմանավում է կողմերի համաձայնությամբ:
12.6. Վկայագիրը գործում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներում, եթե այլ բան նախատեսված չէ Վկայագրով:
12.7. Ապահովադիրը Ապահովագրողին պետք է հայտնի ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին:
12.8. Եթե Վկայագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի Վկայագիրը համարել առոչինչ (անվավեր) և կիրառել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հետևանքները:
12.9. Վկայագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի գործարքի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

12.10. Եթե Վկայագրի կնքումից հետո հաստատվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին նախապես հայտնել է կեղծ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Վկայագիրը համարել անվավեր և կիրառել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հետևանքները:
12.11. Մինչև Վկայագիր կնքումը և/կամ Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրողն իրավունք ունի իրականացնելու գործարքի հետ կապված փաստաթղթերի, տեխնիկական միջոցների, իրականացվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների և ապրանքների ստուգում և/կամ զննում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն փաստաթղթերը և գործարքը ստուգելու նպատակով:
12.12. Եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրությունը տարածվում է միայն այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել՝
ա) որպես ապահովագրության ժամկետի սկիզբ նշված ամսաթվի հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից,
բ) մինչև Վկայագրում նշված ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվի 24 ժամ 00 րոպեն:
12.13. Վկայագրի կորստի դեպքում Ապահովագրողը երկու աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրին է տրամադրում Վկայագրի կրկնօրինակը, իսկ Վկայագրի կորած օրինակը համարվում է անվավեր և դրանով ապահովագրական հատուցում չի կատարվում:
12.14. Ռիսկի կամ ծածկույթի գործողության համար անհրաժեշտ է, որ տվյալ ռիսկը/ծածկույթը ներառված լինի Վկայագրում:

13. ՎԿԱՅԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Վկայագիր կնքելիս և նրա գործողության ընթացքում Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը և/կամ տեղեկատվությունը՝
13.1. Մասնակից անձի տվյալները,
13.2. Հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ կանոնադրությունը իր հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեգիստրի գրանցման վկայականը իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը, հարկային կոդը (ՀՀՎՀ),
13.3. Տեղեկանք Պետական ռեգիստրից կանոնադրության փոփոխության, տնօրենի և մասնակիցների վերաբերյալ, ինչպես նաև Բաց Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված Կենտրոնական դեպոզիտարիայի (ռեեստր վարողի) կողմից, Փակ Բաժնետիրական Ընկերության համար՝ տեղեկանք տրված բաժնետերերի ռեեստր վարողի կողմից,
13.4. Տնօրենի և 25% փայամասնությունը գերազանցող մասնակիցների անձնագրի և սոց. քարտի պատճենները,
13.5. Սեփականատերերի, մասնակիցների, բաժնետերերի և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ գրավոր հայտարարագիր՝ անուն, ազգանունը (անվանումը), գտնվելու կամ բնակվելու հասցեն, ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակները: Սույն կետի իմաստով փոխկապակցված են համարվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված անձինք,
13.6. Տվյալ ոլորտում գործունեություն իրականացնելու համար թույլատրող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ լիցենզիաներ, սերտիֆիկատներ, հավաստագրեր և այլն,

13.7. Տեղեկանք ՏՀՏ-ից բյուջեի հանդեպ առկա պարտավորությունների վերաբերյալ:
13.8. Տեղեկանք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ (ըստ անհրաժեշտության բացված տեսքով),
13.9. Հիմնական միջոցների ցուցակ մնացորդային արժեքով, ապրանքանյութական պաշարների մնացորդ՝ հումք, նյութեր և պատրաստի արտադրանք (ըստ անհրաժեշտության),
13.10. Ֆինանսական հաշվետվությունները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ, սոց հատկացում, եկամտահարկ:
13.11. Այլ բանկերում հաշիվների առկայության դեպքում՝ վերջին 12 ամիսների ընթացքում բանկային հաշիվների շարժի քաղվածքներ,
13.12. Գործող պայմանագրեր և համաձայնագրեր՝ իրացման, մատակարարման, վարձակալության և այլն, հաշիվ ապրանքագրեր՝ ներմուծման և արտահանման,
13.13. ՏՀՏ-ի կողմից իրականացված վերջին ստուգման ակտը կամ Աուդիտորական կազմակերպության եզրակացությունը
13.14. Մասնակցի և Շահառուի միջև կնքված Պայմանագիրը,
13.15. Գործարքի տեխնիկական բնութագիրը,
13.16. Պայմանագիրը կատարելու համար՝

- տեխնիկական միջոցները՝ Պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ,
- շինարարական ծրագրերի դեպքում՝ նախագծային փաստաթղթերը,
- Աշխատանքային ռեսուրսներ՝ աշխատակազմի նվազագույն քանակը, պահանջվող որակավորումը, աշխատանքային փորձի (տարիների նվազագույն քանակի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը),
- գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը,
- ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետները, այդ թվում՝ վերջնաժամկետը,
- Պրինցիպալի գործընկերոջ և/կամ պատվիրակված գործընկերոջ հետ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման հետ կապված կնքված պայմանագրի օրինակը,
- լուծարման գործընթացում գտնվելու կամ չգտնվելու վերաբերյալ, արտոնագրի/լիցենզիայի պատճեն (արտոնագրված գործունեության համար),
- Եթե գործարքը հանդիսանում է խոշոր՝ Ընդհանուր ժողովի (կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ Խորհրդի) որոշումը, այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության:

14. ՎԿԱՅԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ՎԿԱՅԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

14.1. Վկայագիրը վաղաժամկետ դադարում է՝
ա) ապահովադրի, եթե իրավաբանական անձ է՝ լուծարման, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ մահվան դեպքում,
բ) Վկայագրից Ապահովադրի (Շահառուի) վաղաժամկետ հրաժարվելու դեպքում,
գ) Վկայագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարելու, այդ թվում՝ ապահովագրական գումարը սպառվելու դեպքում,

դ) Գործարքը ամբողջությամբ կատարվելու դեպքում,
ե) օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Վկայագրով նախատեսված այլ դեպքերում:
14.2. Պայմանների 14.1 կետով նկարագրված դեպքերում վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման:
14.3. Ապահովագրողի պահանջով Վկայագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, բացառությամբ Պայմանների 14.4 կետով նախատեսված դեպքի:
14.4. Վկայագիրը կարող է Ապահովագրողի պահանջով վաղաժամկետ լուծվել՝ Ապահովադրի կողմից օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Վկայագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում, որի ժամանակ ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման Ապահովադրին:
14.5. Վկայագիրը չի կարող միակողմանի վաղաժամկետ լուծվել Ապահովադրի կողմից՝ առանց Շահառուի նախնական գրավոր համաձայնության:
14.6. Ապահովադրի կողմից Վկայագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման, բացառությամբ եթե Ապահովադիրը Վկայագրից հրաժարվում է Վկայագրի կնքման օրվանից 7-օրյա ժամկետում և առկա է Ապահովագրողի գրավոր համաձայնությունը: Տվյալ դեպքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել Վկայագրի երկու (Ապահովադրի և Շահառուի) բնօրինակները, և Ապահովադրին վերադարձվում է վճարված ապահովագրավճարը Վկայագրի չլրացած օրերի համար՝ պահելով գործավարման ծախսերը վճարված ապահովագրավճարի 10%-ի չափով:
14.7. Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Վկայագրի վաղաժամկետ լուծման պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Վկայագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարը՝ Վկայագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

15. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

15.1. Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ քան 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին իրեն հայտնի էական փոփոխությունների և այլ հանգամանքների մասին, որոնք էապես կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:
15.2. Բոլոր դեպքերում էական են համարվում Գործարքով՝ երաշխիքով և/կամ տեխնիկական բնութագրով սահմանված ցանկացած պայմանի խախտում և/կամ փոփոխում և/կամ ժամկետների երկարացում, ինչպես նաև՝
- ֆինանսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների, այս թվում վճարունակության վատթարացում, պարտքերի վերակազմավորում,
- ղեկավարության կադրային էական փոփոխություններ,
- դեֆոլտի կամ Ապահովադրի այլ՝ չապահովագրված երաշխիքների մասով պարտավորությունների ամբողջական կամ մասնակի չկատարում և/կամ չկատարման նախադրյալների առկայություն
- Ապահովադրի հանդեպ քրեական և/կամ դատական գործի հարուցում,

- Ապահովադրի գործընկերների կողմից ֆինանսական կամ գործնական պարտավորությունների չկատարման վերաբերյալ:
15.3. Այն դեպքում, երբ Ապահովադիրը սույն բաժնով սահմանված կարգով և ժամկետում չի հայտնել ապահովագրական ռիսկի աստիճանի էական փոփոխության (մեծացման) մասին, Ապահովագրողն իրավունք ունի՝
- վաղաժամկետ լուծելու Վկայագիրը՝ համաձայն օրենքի, այլ իրավական ակտերի և Պայմանների, կամ
- պահանջելու Վկայագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված վնասների հատուցում՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան, կամ
- ապահովագրական պատահարի դեպքում մերժել հատուցումը, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալը գտնվում է ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ ռիսկի աստիճանի փոփոխության հետ:
15.4. Ապահովագրողն ապահովագրական ռիսկի աստիճանի փոփոխության մասին տեղեկանալուց հետո կարող է պահանջել փոփոխել ապահովագրության պայմանները կամ սահմանել լրացուցիչ ապահովագրավճար: Եթե Ապահովադիրը հրաժարվում է ապահովագրության պայմանների փոփոխումից կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելուց, ապա Ապահովագրողն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու Վկայագիրը՝ վերադարձնելով Ապահովադրին ապահովագրավճարը՝ չլրացած ժամկետի համար:
15.5. Ապահովագրողը չի կարող վաղաժամկետ լուծել Վկայագիրը, եթե ռիսկի աստիճանի մեծանալու վտանգը վերացած է:

16. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16.1. Ապահովադիրն իրավունք ունի՝
16.1.1. կնքել ապահովագրության Վկայագիր,
16.1.2. Շահառուի գրավոր համաձայնությամբ
- դիմել Վկայագրի պայմանների փոփոխման և/կամ լրացման համար,
- սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Վկայագիրը,
16.1.3.ստանալ ապահովագրական հատուցում սույն Պայմաններով և Վկայագրով սահմանված կարգով,
16.1.4. օգտվել Ապահովագրողի կողմից սահմանված զեղչերից,
16.1.5. ստանալ Վկայագրի կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ բնօրինակը կորցնելու կամ վնասվելու դեպքում:
16.2. Ապահովադիրը պարտավոր է՝
16.2.1. կատարել սույն Պայմաններով և Վկայագրով սահմանված դրույթները,
16.2.2. Վկայագիր կնքելիս Ապահովագրողին տալ անհրաժեշտ տեղեկություններ ապահովագրության օբյեկտի(ների) մասին, նաև հայտնել Ապահովագրողին իրեն հայտնի այն տեղեկությունները, որոնք կարող են զգալիորեն ազդել ռիսկայնության և ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության գնահատման վրա,
16.2.3. կատարել ապահովագրավճարի վճարում՝ Վկայագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում,
16.2.4. Ապահովագրողին փոխանցել և տրամադրել բոլոր ունեցած փաստաթղթերն ու տեղեկությունները, պատահարի հետևանքով առաջացած վնասի հատուցումն իրականացնելու համար հնարավորության դեպքում օժանդակել Ապահովագրողին:
16.2.5. ծանոթացնել Շահառուին սույն Պայմանների և Վկայագրի պայմանների հետ:

16.3. Ապահովագրողն իրավունք ունի՝
16.3.1. մերժել կամ նվազեցնել ապահովագրական հատուցումը, եթե Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը խախտել է Վկայագրի և սույն Պայմանների դրույթներն ու պայմանները,
16.3.2. ստուգել ապահովագրվող օբյեկտի վերաբերյալ Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները,
16.3.3. անհրաժեշտության դեպքում Վկայագրի գործողության ընթացքում ստուգել իրականացվող աշխատանքները, մատուցվող ծառայությունները կամ ներմուծվող/առաքվող ապրանքները,
16.3.4. վաղաժամկետ միակողմանի լուծել Վկայագիրը, եթե Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադրրը Ապահովագրողին տրամադրել է թերի կամ կեղծ տեղեկություններ, իրականացրել է խարդախություն՝ կապված ապահովագրական հատուցում ստանալու հետ,
16.3.5. Ապահովադրից պահանջել և ստանալ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատելու և ապահովագրական հատուցման չափը որոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր,
16.3.6. ինքնուրույն կամ այլ անձանց ներգրավելով, այդ թվում Շահառուին՝ աշխատանքներ տանել ապահովագրական պատահարի պատճառները և հանգամանքները բացահայտելու, ապահովագրական հատուցման չափը որոշելու համար, անհրաժեշտության դեպքում իրավապահ կամ այլ լիազորված մարմիններին հարցումներ կատարել ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատելու և ապահովագրական հատուցման չափը որոշելու համար,
16.3.7. մերժել Ապահովադրի կողմից տրված դիմումը Վկայագրի վերակնքման կամ փոփոխման/լրացման վերաբերյալ՝ դրա հետևանքով ապահովագրության ռիսկայնությունը զգալիորեն մեծանալու կամ այլ հիմնավոր պատճառներով,
16.3.8. հետաձգել ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետը մինչև դեպքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ճշտելը, այդ թվում՝ մինչև լիազորված մարմիններից իրենց ուղարկված հարցումների պատասխանները ստանալը, իսկ եթե պատճառված վնասի առնչությամբ հարուցվել է քրեական վարույթ, ապա մինչև տվյալ վարույթի կարճման մասին որոշման կամ վերջնական օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացումը:
16.4. Ապահովագրողը պարտավոր է՝
16.4.1. ծանոթացնել Ապահովադրին սույն Պայմաններին և տալ Վկայագրի և Պայմանների մեկական օրինակ,
16.4.2. պահպանել և կատարել սույն Պայմաններով ու Վկայագրով սահմանված պայմաններն ու դրույթները,
16.4.3. Ապահովադրից ստանալ տեղեկություններ և փաստաթղթեր, ուսումնասիրել դրանք սույն Պայմաններին համապատասխան, իսկ Ապահովադրի և/կամ Շահառուի կողմից Վկայագրում զգալի փոփոխություն և/կամ լրացում կատարելու մասին գրավոր դիմում ստանալու դեպքում ուսումնասիրել այն և որոշում ընդունել երեք աշխատանքային օրվա ընթացքում:
16.5. Կողմերը պարտավորվում են չհրապարակել, չբացահայտել կամ այլ կերպ երրորդ անձանց չտրամադրել Վկայագրի կատարման կապակցությամբ միմյանց հայտնի դարձած առևտրային, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և/կամ

պարունակող բոլոր տեսակի տեղեկությունները (այսուհետ՝ Գաղտնի տեղեկություններ), բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, չօգտագործել Գաղտնի տեղեկությունները սեփական և/կամ երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

17. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17.1. Ապահովագրական պատահարի կամ ցանկացած այլ դեպքի, որը կարող է հետագայում հանգեցնել ապահովագրական պատահարի, տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և/կամ Շահառուն պարտավոր է տեղի ունեցած պատահարի մասին ցանկացած հասանելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային նամակ, կարճ բջջային հաղորդագրություն և այլն) 48 ժամվա ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին) Վկայագրում նշված կոնտակտային տվյալներով՝ հեռախոսահամարներով, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին՝ ներկայացնելով հայցային դիմում:
17.2. Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Պայմանների 17.1 կետում և/կամ Վկայագրում նշված կարգով և/կամ ժամկետներում, ապա Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:
17.3. Այն բանից հետո, երբ Ապահովադրին հայտնի է դառնում որևէ իրադարձության տեղի ունենալու մասին, որը կարող է Ապահովագրողին դիմելու համար հիմք հանդիսանալ, Ապահովադիրը (նրա ներկայացուցիչը կամ Շահառուն) պարտավոր է՝
17. 3.1. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ,
17.3.2. պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան լիազորված մարմնին,
17.4. Այս կամ այն ծառայության դիմելու ընտրությունը կախված է պատահարի բնույթից և համապատասխանությունից: Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողի օգնությանը վերը նշված ծառայություններից մեկը ընտրելու հարցում: Ապահովագրողն իրավունք ունի նաև իր հայեցողությամբ վնասի պատճառը և/կամ չափը պարզելու նպատակով իրականացնել համապատասխան փորձաքննություն կամ դրա իրականացումը հանձարարել անկախ փորձագետի և ինքնուրույն վճարել այդ ծառայության համար:
17.5. Ապահովադիրը պարտավոր է տրամադրել Ապահովագրողի կողմից պահանջվող տեղեկություններ և փաստաթղթեր, կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով և Վկայագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:
17.6. Սույն գլխի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժելու կամ նվազեցնելու ապահովագրական հատուցումը:

18.ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

18.1. Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովադիրը և կամ Շահառուն պետք է ներկայացնի Ապահովագրողին հետևյալ փաստաթղթերը՝

18.1.1. Ապահովագրական հատուցման դիմումը, որի ձև տրամադրում է Ապահովագրողը.
18.1.2. Շահառուի կողմից ներկայացված վճարման գրավոր պահանջը.
18.1.3. Ապահովադրի պարտավորություններ չկատարելու և կամ թերի կատարելու վերաբերվող փաստաթղերը և ապացույցները.
18.1.4 Ընկերության ընթացիկ ֆինանսական դրությունը արտացոլող փաստաթղթեր.
18.2. Բոլոր դեպքերում Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել ներքին ծառայողական փաստաթղթերի պատճենը, (այսինքն՝ ցանկացած ակտ, արձանագրություն, բացատրագիր, ծառայողական գրություն, զեկուցագիր և նման փաստաթուղթ), որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ուսումնասիրվող պատահարի հետ:
18.3. Բոլոր այն դեպքերում, երբ վնասը առաջացնող հանգամանքների քննարկմանը մասնակցում են որևիցէ պետական, այդ թվում իրավապահ մարմիններ, Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել այդ մարմինների կողմից ներկայացվող փաստաթղթերը՝ որոշում, եզրակացություն և նմանատիպ այլ փաստաթղթեր:
18.4. Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից, այդ թվում եզրակացություն կամ ակտ կամ հաշվետվություն՝ տրված անկախ փորձագետի կողմից,
18.5. Շահառուի բանկային տվյալները՝ հատուցումը փոխանցելու նպատակով:
18.6. Այլ փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության որոշումն ընդունում է Ապահովագրողը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից և վնասի չափից:
18.7. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է պատահարի վերաբերյալ Պայմաններով սահմանված փաստաթղթերը ներկայացնել Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում:
18.8. Նշված ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմաններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում Ապահովագրողը, Պայմանների համաձայն, Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:
18.9. Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ հիմնավոր պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են 18.8. կետում սահմանված դրույթների հետ:
18.10. Սույն գլխի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը:

19. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

19.1. Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել ապահովագրական պատահարի արդյունքում կրած վնասների չափը: Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել նաև Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի չափը:
19.2. Եթե ապահովագրական գումարը հաստատված է արտարժույթով արտահայտված գումարի դրամային համարժեքով, ապա ապահովագրական հատուցման վճարման չափը հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրական պատահարի վրա հասնելու օրը տվյալ արտարժույթի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքից:
19.3. Եթե Ապահովադրին հասցված վնասները հատուցել են երրորդ անձիք, ապա Ապահովագրողը վճարում է միայն Վկայագրի համաձայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերությունը: Այդպիսի գումարներ ստանալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Ապահովագրողին:
19.4. Ապահովագրողն ազատվում է այն ծախսերի հատուցումից, որոնք առաջացել են Ապահովադրի կողմից հնարավոր կորուստները նվազեցնելու խելամիտ և հասանելի միջոցները դիտավորյալ չկիրառելու արդյունքում:
19.5. Ապահովագրական հատուցումը վճարվում է այն անձին (Շահառուին), ում օգտին կնքվել է Վկայագիրը:
19.7. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը մերժելու հիմք են հանդիսանում՝
ա) Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որն այդպիսին է որակվում դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն,
բ) Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար,
գ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:
19.8. Ապահովագրական հատուցման վճարման մերժումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով, այդ թվում ֆինանսական հաշտարարի կամ դատական կարգով:
19.9. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:
19.10. Ապահովագրողը պարտավոր է՝
ա) Պայմաններով նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու (մերժման դեպքում նշելով դրա պատճառները) մասին եզրակացություն (որոշում): Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադրի (Շահառուի)՝ Վկայագրում նշված հասցեով փոստային առաքմամբ և/կամ էլեկտրոնային փոստով, տրամադրում է Ապահովադրին

(Շահառուին): Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով,
բ) Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում միանվագ վճարել ապահովագրական հատուցումը:
19.11 Ապահովագրողն իրավասու է հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը այն դեպքում, եթե՝
ա) կան հիմնավորված կասկածներ Ապահովադրի՝ ապահովագրական հատուցումը ստանալու իրավասության վերաբերյալ: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը չի վճարվում այնքան ժամանակ, քանի դեռ չեն ներկայացվել անհրաժեշտ ապացույցներ (այդպիսի ապացույցներ են հանդիսանում Պայմանների 18 գլխում նշված փաստաթղթերը),
բ) ապահովագրական պատահարի փաստի վերաբերյալ քրեական գործ է հարուցված Ապահովադրի ղեկավար աշխատակիցների (հենց Ապահովադրի կամ նրա հարազատների, եթե Ապահովադիրը հանդիսանում է ֆիզիկական անձ) նկատմամբ՝ մինչև քրեական հետաքննության ավարտը:
19.12. Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից կամ դրամարկղից դրամական միջոցների դուրսգրման ամսաթիվը:
19.13. Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու դեպքում ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազում է վճարված հատուցման չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելու պահից: Ապահովագրական հատուցում ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը:
19.14. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում եզրակացության մեջ պետք է նշվեն մերժման պատճառները:

20. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

20.1. Ապահովագրական պատահարի պատճառների և /կամ վնասի չափը որոշում է Ապահովագրողը, իր կողմից նշանակված անկախ փորձագետի և /կամ իր աշխատակից փորձագետի կողմից:
20.2. Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող են կազմել վթարային հավաստագիր: Այդ նպատակով նրանք իրավունք ունեն ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվությանը:
20.3. Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:
20.4. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների,

կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:
20.5. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:
20.6. Ապահովադիրը նույնպես իրավունք ունի նշանակել փորձագետ-սյուրվեյեր՝ վնասի ծագման պատճառները որոշելու և/կամ դրա չափերը գնահատելու համար:
20.7. Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը կրում է իր կողմից նշանակված փորձագետի (սյուրվեյերի) ծառայությունների վճարման ծախսերը:

21. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ

21.1. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո հատուցված գումարի սահմաններում Ապահովագրողին են անցնում Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Ապահովագրողի կողմից հատուցված վնասի պատճառման համար պատասխանատու անձի նկատմամբ:
21.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել նրան բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին փոխանցված վնասի պահանջի իրավունքն իրականացնելու համար:
21.3. Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից, կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումը արդեն վճարված լինելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Շահառուից) ետ վերադարձնելու ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարները:

22. ԾԱՆՈՒՑՈՒՄ

22.1. Բոլոր ծանուցումները, որոնք Ապահովադիրը պետք է իրականացնի Պայմաններին և/կամ Վկայագրի այլ պայմաններին համապատասխան, պետք է հաստատվեն գրավոր ձևով, եթե այդ ծանուցումները կատարվել են բանավոր, հեռախոսով, հեռագրով կամ այլ միջոցներով: Ծանուցման ամսաթիվ ասելով՝ հասկանում ենք այն ամսաթիվը, որով ստացվել է ծանուցումը:
22.2. Վկայագրի բովանդակությանը վերաբերող թողարկված Համաձայնագրերը վավերական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են գրավոր ձևով:

23. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

23.1. Վկայագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Վկայագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Վկայագրով պարտավորությունների կատարումը:
23.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:
23.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Վկայագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականցմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

24. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

24.1. Վկայագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են համաձայն օրենսդրության:
24.2. Վկայագրի և Պայմանների միջև հակասությունների դեպքում Վկայագրի դրույթները գերակա են Պայմանների դրույթների նկատմամբ:
24.3. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: